

ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՅԻ

Տարեկան գինը 5 բուրե, կէս տարվանը 3 բուրե:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Մատուրեանի խանութում:

Օտարաբաղադրյալը գրվում են ուղղակի
Тифлису, Редакция „Мая“

Խմբագրատանը բաց է առաքելու 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են առանձին լեզվով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խառնանչիւր բառից մի կողմէ:

Նոյա ուր դեռ չեն վճարել նեկայ տար-
վայ ՄԱՅԻՍ տարեկան գինը խմբագրութիւնը
խնդրում է շուտով հասցնել իրանց վճարը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայերի կոչումը Ասիայի մէջ—Ներ-
քին տեսութիւն: Վաստաստան աշխարհ:
Նամակ Բագրիւմի Ներքին լուրեր:—Արտա-
քին տեսութիւն: Ֆրանսիայի իտալիայի Նա-
մակ Ժընէվից:—Իսպանիայի լուրեր:—Յայտարա-
րութիւններ:—Տեղեկացոյց:—Բանասիրա-
կան: Ժողովրդական ուսումնարանները Գերմա-
նիայում:

ՀԱՅԵՐԻ ԿՈՉՈՒՄԸ ԱՍԻԱՅԻ ՄԷՋ

Ոչ մի ժամանակ կրթված աշխարհի ու-
շագրութիւնը այժման դարձված չէր արեւելքի
վրա, որքան այժմ:

Ի սասորութեանը յատկանշիչ է առաքե-
լութեան ոգին: Նոր օր կրթութիւնը մի
որ է է շրջանում հաստատ հիւր է ստացել
և կանոնաւոր կերպով շարունակում է առա-
ջադիմութեան ընթացքին հետեւել—նրան յա-
տուկ է ուշքը դարձնել և իր մշակված, սե-
փական շրջանից դուրսը գտնվող մարդկային
հասարակութիւնների կեանքի վրա տարածել
կրթութեան ուղին իրանցից դուրսը, մտցնել
լուստ ու թիւան գաղափարը օտար շրջանների
մէջ:

Այդ մի շատ հասկանալի ձգտումն է՝ երբ
մի մարդ լուստօրոյցից, նա կաշխատէ իր
հետ առօրեայ յարաբերութիւնների մէջ գործ-
վող մարդկանցի վրա էլ ներգործել այնպէս,
որ նրանց բարոյական և մտաւոր զարգացման
մասին յիշող փորը ինչ բարձրաստի, նա կաշ-
խատէ իրանց ստոր զարգացման աստիճանին
կանգնած մարդկանցի բարձրացնել իրան
հասարակութեան, որովհետեւ ինքն էլ այն ժա-
նանակ աւելի բողբոսէր կը լինի, աւելի ա-
պահով կը լինի իր աշխատանքի, իր թէ
մտաւոր թէ բարոյական կատարելագործման
մէջ...

Ներկայացնենք մեզ երկու հարեան գիւ-
ղի՝ մինը նրանցից բնակեցրած է աշխատանքի,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ ԳԵՐ-
ՄԱՆԻՍՈՒՄ ԵՒ ՄԱՅԻՍԱՌԱՊԷՍ՝ ՀԱՐԱ-
ԻԱՅԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԳԻՒԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ-
ՆԱՐԱՆՆԵՐԸ

Նախ քան ներկայացնենք մի պատկեր մեր
հարաւային Գերմանիայի ժողովրդական ուսում-
նարանների, հարկաւոր եմ համարում ընթերցող-
ներին ուշադրութիւնը դարձնել երկու գործիչ-
ների վրա, որոնք ներկայումս ուժով մղում են
ուսումնարանը դէպի հիմնաւոր վերանորոգութիւն
և շուտով կը պատճառեն մի կատարելաւ ձևափո-
խութիւն մեր ժողովրդական ուսումնարանների
կազմվածքի մէջ: Այս երկու գործիչներն են նախ
ուսումնարանը եկեղեցուց կատարելապէս ազա-
տելու փորձը: Ինչպէս ամեն օր գիտէ, ժողովրդա-
կան ուսումնարանը եկեղեցու ծնունդ է, մի ար-
դիւնք քիֆօրմացիայի և այս պատճառով միշտ
պայտանք է եկեղեցու հետ մի մտ յարաբերու-
թիւն: Բայց կարելի է երեխան այժմ արդէն չա-
փահան է դարձել, իրան արդէն բաւական ուժով
է զգում, որ կարողանայ իր սեփական ունեւերի
վրա հաստատ կանգնել: Այս հարցը վճռելու է
ապագան:—Ներկայումս գործիչը, որ առաջինն հետ
սերը կապված է, ինչպէս կը ցոյց տրվի հետեւեալի

արդիւնաբերող երկրագործներով, միւսը թա-
փառական, անկիրթ, աշխատանքին անտոյժ,
գուցէ աւաղակութեամբ ապրող բնակիչնե-
րով... առանց ինչ օգուտը միթէ չէ պահանջի
որ նա աշխատէ ուսումնարաններ և աշխա-
տանքի սկզբունքներ մտցնել իր անկիրթ եղ-
բայրների շրջանը: Աշխատանքը դիւրի գոյու-
թեան համար հորիւստ է որ հարեան գիւղը
բարոյական և մտաւոր զարգացման աւելի
բարձր աստիճանին հասնել, եթէ ոչ առա-
ջինն աշխատանքը, նրա արդիւնաբերութիւնը
ապահոված չէ, անգաղար վտանգի մէջն է
գտնվում: Ինչպէս կրթիւն լուստօրոյց—պա-
հանջում է մի սեփական օգուտը, մի անձ-
ական շահը,—բայց մի և նայն ժամանակ ու-
րախալին այն է, որ մի այդ անձնական շահը
համապատասխանում է և այն շրջանի շահ-
քին, որին մենք ջանում ենք լուստօրոյց համա-
պատասխանում է և ընդհանուր մարդկութեան
շահքին...

Այդ իսկ աչքով պիտի նայէ և Նւրոպան
Նախի վրա... Նրա անձնական շահը պա-
հանջում է մտցնել լոյս և կրթութիւն Նախի
մէջ, մեզ թէ ինքնիրիս, ինչ ամբողջ մարդ-
կութեան համար օգուտէն կացուցանելու
համար...

Եւսկիւր գարնան մի օրինակ Նախիւստի
կամ Պարսկաստանի ամբողջ անտառանքի
անտեսական դրութեան և այդ երկրների աշ-
խատանք անհոգութեան պատճառով ամեն
աւելի կրթվում է սով, սովը ծնում է զանա-
զան հիւանդութիւններ, այդ հիւանդութիւն-
ները անցնում են յիշեալ երկրների սահման-
ները և տարածվում են բարձրացած, կրթված
երկրների... Եւրոպոյ Նւրոպայի անձնական
օգուտը չէ պահանջում հոգալ Նախիւստի
կամ Պարսկաստանի անտառական դրութեան
մասին...

Մարդկութեան իւրաքանչիւր անդամի ան-
ձնական շահը համապատասխանում է արեւմ-
նուհանուր մարդկութեան շահքին:

Աւելին Նւրոպան չէ կարող չը հետաքրք-
րել մեզանով, չէ կարող մեր անձնական և

մէջ, և արդեան ժամանակի դէպի գործնակա-
նութիւն ձգտող ուղղութիւնը, որ ամեն աւան-
դող առաքելայից նախ և առաջ ոչ թէ հարցնում է
որքան դա յարմար է արդեոք միտքը վարձեցնե-
լու և դարձնելու, այլ ինչ օգուտ պէտք է իրի
սովորածը:

Մեր ուսումնարանների համար անկասկած կա-
րող է միայն օգուտէն լինել, որ միանգամայն եր-
կու կողմից և երկու աւելի շուտ դէմ պատե-
լաւմ է յայտնվել: Բայց այս ձգտումն զէպի ա-
ւելի լաւ մի և նայն ժամանակ ակնհայտ ցոյց է տա-
լիս, որ մեր ուսումնարանները, որոնք չը նայելով
որ բաւական բարձր աստիճան են բռնում բոլոր
աշխարհի ուսումնարանների շարքումը, այնու ա-
մենայնի գիտ ևս մի քանի թղթ կոպիւր ունեն և
որ դեռ ևս բաւական աշխատանք է հարկաւոր
նոցա մինչև կատարելութիւն բարձրացնելու հա-
մար:

Լաւ ուսումնարաններ ունենալու համար նախ
և առաջ հարկաւոր են լաւ վարժապետներ,—այս
պատճառով պիտուի ձեռնարկել ակզբին էլ ոչինչ ծախք
չէ խնայել լաւ ուսուցիչներ պատրաստելու հա-
մար: Վերադառնալով փոքրիկ տեղութեան մէջ
օրինակի համար, 1³/₄ միլիոն բնակիչներով, կան 6
պետական սեմինարիան և 2 մասնաւոր ուսում-
նարաններ, որոնցից ամեն մէկի մէջ մօտաւորապէս
100 երիտասարդներ, 3 տարեկան կուրս անցնե-
լով, ուսուցչական ապարելով են պատրաստվում:
Այսպէս պէտք է աւելացնել և մի քանիսը որոնք
ուսուցչական են պատրաստում,—որովհետեւ ու-

նըհանուր շահքը աչքի առաջ ունեւում, ան-
տարբեր միայն Նախիյի վիճակին...

Հարցը այժմ նորանումն է, թէ ի՞նչ մի-
ջոցով, ի՞նչ տարրի օգնութեամբ նա պիտի
հասնի իր նպատակին... Այն է այն ազգը,
այն յարմար և կրթութեան գործին մատչելի,
նրա սկիզբները բարձրելու աւելի ընդունակ
տարրը, որ եւրոպական կրթութեան և Ն-
ախիյի գտնէ արեւմտեան մասի մէջ կարող է
լինել շաղկապ, կարող է միջնորդ ծառայել
կրթութեան առաքելութեան համար...

Թող ծիծաղեն մեզ վրա, բայց մենք ծան-
ր և անկրկնալ յայտնում ենք մեր համոզմունքը,
որ այդ միջնորդները՝ հայերը պիտի լինեն:

Ինչու ասիական ազգերից հայերը ամենից
մօտիկ են եւրոպացիներին, թէ իրանց ցեղով,
թէ յատկութիւններով: Պատմութեան մէջ
լուստօրոյցի միջոցով միշտ պատկանել է
հնդկա-գերմանական ցեղերին, իսկ Նախիյի մէջ
հայերն են այդ ցեղին պատկանող ամենաւա-
րձեան ազգը:

Ինչպէս լուստօրոյց մեզ, որ մենք էլ
մեր կողմից մտցնենք կրթութիւնը Նախիյի
մէջ.—մեր մէջ բնակեցնելով եւրոպական գաղ-
թականներին... այդ ի հարկէ կարող է օգուտ-
էտ լինել, բայց մեր կարծիքով մի կրթված
տարր մի այլ երկրում լուստօրոյցութեան մտցնե-
լու ժամանակ պիտի ջանայ միջոց տալ այն
տարրին, ինքնուրոյնաբար զարգանալ:

Մեր կարծիքով աւելի արդիւնաւոր հի-
տեանքներին կը հասնէ Նւրոպան, եթէ մե-
զանից վերցրած անդամներին իր ծոցում լու-
ստաւորէ, նրանց իրացնել սոյ իր կրթութիւնը
և յետոյ գործ ինչ մեզ որպէս եւրոպական
զաղափարի առաքելներին...

Ինչպէս վաղ մեզ հայերին, եթէ այդ չը հաս-
կանաւք, վաղ ձեզ հին սիրունը, վաղ ձեզ երի-
տասարդութիւն, եթէ փոխանակ նպատակ
եւրոպական ուսում ստացած երիտասարդ հայ-
րենակիցների գործունէութեանը և կրթու-
թեան պրօպագանդային,—գուր կը կապէր
նրանց ձեռք ու ոտը, կարգիլը, կը հալա-
ծէր նրանց...

սուցիչների ընդհանուր պակասութիւնը և կանանց
սեռի ոյթերը հարկաւոր է դարձնում: Սովորապա-
կան ուսման մտցնվող ցեղային, ուսուցիչների մէջ
կարօտութիւնը ևս աւելի սաստկացաւ: Ամեն երե-
խայ եթէ տարեկան հասակից պարտաւոր է ու-
սումնարան գնալ, եթէ միայն նորան չեն խա-
ղարում մարմնի խոշոր պակասութիւններ, Եւ-
այն ծնողները, որոնք գիւղերից հեռու են բնակում,
պարտաւոր են իրանց երեխաները ամենամօտիկ
ուսումնարան ուղարկելու: Եթէ ծնողները դիտ-
մամբ չեն հիտում այս օրէնքին, նոցա երեխակ-
վում են դրամական սուղաբերին, որ անշան չէ:
Այդպէս է որ մօտ 1000 բնակիչ ունեցող գիւղե-
րում մենք տեսնում ենք շատ անգամ մինչև 160
երեխաներ, որոնք ուսումնարան են մանկալիս,
որովհետեւ սովորական ուսման տեսութիւնն է
7—14 տարեկան հասակը—չը հաշվելով այս հա-
սակից աւելի փոքր երեխաների համար եղած մաս-
նաւոր ուսումնարանները: Այս 160 աշակերտներ
բաժանված են երկու ուսուցիչների մէջ: Ուսում-
նարանի կառավարիչը (Schulmeister) պարտաւոր է
11—14 տարեկան երեխաներով, իսկ նորա օգ-
նակ ունեցող երեխաներով: Հեշտ հասկանալի է,
որ ուսուցիչը այսպիսի մեծ քանակութիւն աշա-
կերտներով, թէ և բաժանված լինեն նոցա մի քանի
զուգընթաց դասատուներ, մի սարափելի դժուար
է ծանր աշխատանք ունի: Ուսուցիչը դրութիւնը
փոքր ինչ թիւթանքներ ևս համար, մի նոր օրէնքի
գործութեամբ, պէտք է այն դիւրեւոր, ուր մի քանի

Պուր կը լինէր մեղաւոր թէ ձեռք թէ
մարդկութեան առաջ...

Ձեր վարմունքը մարդկութեան առաջ կա-
նանակի ի սաւարասիրութիւն, ձեր վար-
մունքը ձեր անձին վերաբերութեամբ կա-
նանակի հասարակական անձնասպանու-
թիւն...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՏԱՆԱԿԱՆ

Քուրթայիսի Օկրոժնոյ դատարանում ապ-
րիլի 13 և 14 քննված գործը հոկտեմբերի
12-ին, 1872 թ-ի երկաթուղու գնացքի
կործանման մասին:

Պործի բովանդակութիւնը այս է, ինչպէս
որ երևում է գիւղացուցից:

Հոկտեմբերի 12-ին, 1872 թ-ին, մշակների
գնացքը, բաղկացած 4 պատճորմներից, լե-
բարեկով և հողով, և մի շողկաւորով, դուրս
գալով Պոնիի կայարանից Բիժատուրանի
ուղղութեամբ, յանկարծ սկսեց այնքան արա-
գութեամբ գնալ, որ աշխատողները չը կարու-
ղացան կանգնեցնել նրան և գնացքը շողկաւոր
իր ճանապարհից կործանվեցաւ: Արտաքին
5 մարդ մշակներից և վիրաւորված են 11
մարդ: Պատասխանական բնիչը յանձնեց այդ
գործը Հարօպանի հայտարար դատաւորին, որ
15-ին գիւղացիների 1873 թ-ի տուեց հետեւ-
եալ վճիռը: Հայտարար դատաւորը համա-
րկով գնացքի կործանման պատճառը ասո-
ւագիւրի և պատճորմների անբարեբաղ լինելը
և այդ վերջինների չափից դուրս բռնաւոր-
ված լինելը, համարելով Տօրէնց, Պաճէն, Սի-
կորսի և Նախուրովսիի մեղաւորածներին պա-
տիճների օրէնսդրութեան 1466 յօդվածի հի-
ման վրա մեղաւոր, դատաւարանց նրանց եր-
կու ամուլայ բանդարկութեանը: Նայն պատ-
ժին դատաւարանց և երկաթուղու գլխաւոր
տոմարիչ պ. Ալեքսեյովին, որպէս այն ան-
ձին, որ գլխաւորապէս պատասխանատու է
երկաթուղու վրա գործ գրվող բոլոր գործիք-

տարի շարունակ աշակերտների թիւը 120-ից գե-
րազանցում է, մի 3-րդ ուսումնարան հիմնվել: Բայց
այս օրէնքի կատարելը, ի նկատի ունեւում ուսու-
ցիչների պակասութիւնը, դառնում է բոլորովին
անիրագործելի:

Եւ աւելորդ եմ համարում հարաւային Գերմա-
նիայի ուսումնարանի յիմնութեան նկարագիրը տա-
լու: Սովորաբար դատաւորը գտնվում է ներքե
յարկումը, իսկ վերին յարկումը ուսուցիչ բնա-
կարանը: Մեր ուսումնարանների գեղարուեստա-
կան յիմնութիւններ չեն, բայց այնու ամենայնիւ
նոցա գիւղի լաւ շինութիւններից են: Ուսում-
նարանի առաջ գտնվում է միշտ մի փոքր կամ
մեծ հրապարակ, որտեղ երեխաները դասավիջոց-
ների ժամանակ կարող են շարժողութիւն անել:

Ամառը դատաւորութիւնը սկսվում է առաւօտու
6 կամ 7 ժամին և շարունակվում է 6—9 կամ
10 ժամ: Չմուր դատաւորութեան ժամանակը
նշանակված է 8—12 ժամ և 1—3: Մեծ դասա-
տուներ պարագում են միջին թիւով օրական 4
ժամ, իսկ փոքրերը 3 ժամ: Ինչը վարժապետը
հաղիւ թէ 6 ժամերից պակաս զբաղած լինի օր-
վայ միջոցում, որովհետեւ նա ստիպված է իր
80—100 աշակերտներից մի քանի բաժնիներ կազ-
մել: Մի քանի առաքելներ, ինչպէս օրինակ կրօնը,
գրիչը, կարգաւոր, երգեցողութիւնը նա աշակերտ-
ներին միայն է դաս տալի, միւս առաքելները
նա առանձին է դաս տալի զանազան բաժնե-
րում: Երբոր նա ա, դասատու հետ է պարագում
ը. դասատուին պէտք է իր համար հանգարտ պա-

միտանքի փրակներով անգամ ուսումնա-
յալը կըրտականի ձևովն է, երկայնի
միտքը և սիրտը այդ կործանիչ ազդեցութեան
տակն է դարձանում:

Վարդապետ ինքնավարութիւնը ոչնչաց-
րած է, հաւաքովեա իրաւունքը վերցրած է,
լրացրութիւնը սպանված է, առաջարկված է
մի նոր պոստիւլատ գրաւաճառութեան իրաւունքը
սահմանափակելու համար, առեւած է մի ծրա-
գիր՝ զրկել գաղթականութիւնները ազգային
ժողովի մէջ իրանց ներկայացուցչներին ու-
ղարկելու իրաւունքից: Արդիված է բազա-
լացիներին իրանց ազատ համարվել պետու-
թեանց ծանալված այս կամ այն դաւանութե-
նից: Ամեն մարդ պիտի իրան անպատճառ որ
և է դաւանութեան պարտական ծանալէ, եթէ
ու սպառնում են մահաց յետոյ չը թաղել
առ իրան ինչպէս կամեում է...

Վերջապէս անհատաւորութիւնը գաղա-
տանի առջև, կաթոլիկ հասարակարանի հիմն-
ընդհանրութիւնը, ընտրողական յէնդի-
մանցիւնը, որ զրկում է ազգատ դասերը ընտր-
ողութեան իրաւունքից, պարտաւորիչ հրաժար-
բոլոր գործքն (որ դաւանութեան և պատկա-
նէին զինուորականները), ներկայ գտնվել զո-
րանների մէջ կաթոլիկ ժամասացու-
թեանը...

Ահա Ֆրանսիայի այժմեան դրութիւնը...
Այժմ հարցնում ենք՝ միապետական կու-
սակցութիւնը, որ այդքան աշխատում է Ֆր-
անսիայի յետադիմութեան համար, կը յաղթէ
արեւոք բոլոր արգելքները, կամ կը հասցնէ
իր հայրենիքը կատարեալ անկմանը: Այդ
անվստահութիւնը տալովայի մասին, սկսում է
յայտնվել միապետական ուղղութեան ամենա-
հաւատարմ կուսակցիների սրտումը: Պ. Բէլէ,
այն հայաճողը քաղաքական թաղման, այն
պաշտպանը կրօնի և հասարակական բարոյա-
կանութեան,—այս օրերս անձնասպանութիւն
գործից: Ասում են պատճառը եղիլ է զոգնում
նա մի ժամանակ հանրապետական էր. ասում են
որ նա տեսաւ և համոզվեց որ միապետական
կուսակցութեան յաղթութիւնը կանխած-
ն է...

Բէլէն, ինչպէս անձնասպան, պիտի թողված
լինէր առանց հոգեւորականների ներկայու-
թեան...

Բայց վարչութիւնը թաքցրեց անձնասպա-
նութեան իրողութիւնը, խտրեց պատը և եկե-
ղեցին,— և թաղումը կատարվեցաւ հոգեւորա-
կաններով:

ԻՏԱԼԻԱ
Ֆրանսիայի թշնամութիւնը Վերմանիայի
դէմ, վերջին պատերազմից յետոյ, դժուար չէ
հասկանալ,— բայց աւելի դժուար է ըմբռնել
Ֆրանսիայի աստիճանութիւնը դէպի Իտալիան...
Շնորհաւոր է այդ աստիճանութիւնը, արուեստա-
կան կերպով գրգռված լինելով լեզուական
և կրեական կուսակցութեան կողմից այս րո-
պէս շատ սատակ է, բայց մեր կարծիքով
չունի Ֆրանսիական ժողովրդի սրտում խոր
արմատներ...

Իտալիան անշուրհակ չէր Ֆրանսիային
այն օգնութեան համար, որ 1859 թ. այդ
վերջինը նրան ցրեց է առեւ, և վարձարեց
նրան բաւականաչափ, հրաժարվելով յոգուա
Ֆրանսիայի երկու հարուստ երկրներին՝ Նից-
ցայից և Մոնթեֆայից:

Նապոլէոն III-ը մասամբ միայն կատարեց
այն որ խօստացած էր Իտալիային, բայց յի-
տոյ սկսեց ամեն տեսակ արգելքներ դնել Իտա-
լիայի միութեան գործին,— թող վկայ լինի
Ֆրանսիական պոքի: Զուտ ուղարկելը: Նա
կամ պէտք է յանձնէր Իտալիան իր սեփա-
կան ոյժերին, ինչպէս որ անտարբեր Լ. Բի-
թիլիս թագաւորը անում էր, կամ պէտք է
ազատէր Իտալիայի ամբողջ հիւսիսային մասը
և արգելք չը դնէր Զուտի հետ միասնալու:

Բայց այդ նա չարաւ Սոֆիերիօսից յի-
տոյ... Եւ այդ երկու երկրներին Ֆրանսիային
միացնելը ընդգէշ էր այն ազդութեան գա-
ղափարին, որ իբր թէ Նապոլէոնի իդէալն էր:

Այժմ կրեական կուսակցութիւնը Ֆրան-
սիայում սատակ ատում է իտալական պի-
տեութիւնը, այդ վերջինի թէ կրօնական, թէ
ազգային շարժման պատճառով, ատում է նրան
որ հաճելի լինի պապին իր մէջ յղվող դեռ ևս
պապին աշխարհական իշխանութիւնը վերա-
դարձնելու ցնորքը... Աղերսականները ծնունդ են
թշնամացնել Ֆրանսիայի տէրութիւնը Իտա-
լիայի դէմ և չեն նկատում որ սորանով նը-
պաստում են Իտալիայի առաւել սերտ բա-
րեկամութեան հաստատելուն Վերմանիայի
հետ:

Այժմ Ֆրանսիան պէտք է բողբոջի ի-
գիտման միտադրութիւնը դաւանար, որ ոյժ
ունենար Զուտի հետ թիւ թիւի տուած փո-
խադարձ յիստադիմութեանը ընթացումը... Մինք
աւելի կաննք Ֆրանսիան պիտի իսկապէս վե-
րադաւանար խաղաղաց պատերազմների ժա-
մանակին... բայց այդ բաղաւորապէս անհա-
րին է:

Չարմանալ չէ, երբ քննում ենք հետեւեալ

մասը բռնված է աղջկաներով, միւսը տղաներով:
Մանկավարժական կէտից արդէն այս առթիւով
շատ վիճարանել են. Գնանի ինչ որ ասվել է դրա
համար կամ դրա դէմ, մեզ չառ հետը կը տա-
նէր: Բաւական կը լինի մի քանի կարծիքներ յի-
շել: Որ այդ դիպուածներում բարոյականութիւնը
վատացի մէջ է ընկնում— ընդգէշ է բոլոր մանկա-
վարժական փորձերի: Բայց այնու ամենայն չեմ
կարող ես համաձայնել մի նշանաւոր պիտապոզի
մտքին, որը պնդում է, թէ երկու սեռերի ամենու-
րեայ միասին լինելով սեռական ձգտումն աւելի
թուլանում է քան թէ զրգնում: Եթէ ձգտումը
մի անգամ զարթնել է, այն ժամանակ այդ կար-
ծիքը բոլորովին սխալ է: Բայց մենք գործ ու-
նենք սովորաբար այնպիսի երեխաների հետ, որոնք
մինչև 14 տարեկան հասակը զեռ դարգացած չեն:
ձգարիտ երկու սեռերի միասին լինելը բաւ կող-
մեր շատ ունի: Դա խթում է ինքնասիրութիւնը,
բացի սորանից աղջկաները տղաներից մի առանձ-
նացած խումբ են կազմում և փոխանակ այն հա-
մակրութեան, որ նոքա աւելի ուշ հասակում ցրեց
են տալիս դէպի իրար, այժմ նոքա մէջ կայ միայն
ատելութիւնը և արհամարհանքը. երկու սեռերը
իրար համար մի կոմտրոյ են կազմում: Այնպէս
որ բոլորովին ապահով կարելի է լինել բարոյա-
կան վտանգների կողմից, մանաւանդ եթէ այն
զգաւորութիւնը գործածվի որ զատաբնորոշների ժա-
մանակ աղջկաները և տղաները առանձին ար-
ձակվեն: Անտրանայի է ի հարկէ, որ ինչոր վե-
րաբերում է դաստիարակութեան, բաժանված ուսու-
նարաններում կարելի է բոլորովին տարբեր հե-

տեանքներով հաւանել, մանաւանդ որ մօտ 12 տա-
րեկան հասակից սկսած անհրաժեշտ է ինչպէս և
առական անհատականութիւնների վերա ուշա-
դրութիւն դարձնել դաստիարակութեան եղանակների
մէջ:

14 տարեկան լրանալով, աշակերտը թողնում է
գիւղական ուսումնարանը. տղաները մնում են
իրեն աշակերտ մի արուեստաւորի մօտ, աղջիկ-
ները իրանց ընտանիք են վերադառնում իբրեւ տան
տիկնոջ օգնականներ: Բայց հասարակութիւնը հո-
գում է երկու սեռերի էլ կրթութեան շարունա-
կելու մասին մինչև նրանց 18 տարեկան հասակը:
Կրթվող ուսումնարանները (2 դաս կրթակի օրե-
րին) և ձմեռվայ երկրորդ դասերը (նոքա միայն
տղաների համար են)— շաբաթը երկու անգամ եր-
կու դաս, նոքա համար են, որ ուսումնարանում
ուսանող յիշողութեան մէջ կրկին արթնանալ:
Իհարկէ երկրորդ դասերի ուշադրութիւնը մեծ չէ,
երբոր նոքա ամբողջ օր գործարանում կամ այլ
տեղ պարապելուց յետոյ, հոգնած 8—10 ժամ երե-
կոյեան ուսումնարանում պէտք է նստեն,— բայց
այն եռանդը որով աշակերտներից շատերը ու-
սումնարան են գալիս և դասերի մասնակցում
շատ անգամ ուշադրութեան արժանի է և մի ա-
պացրոց որքան օգտաւէտ էր պահպանել այս բա-
րեգործական հիմնարկութիւնները, որոնք սկիզ-
բումը անյաղթելի երեւող դժուարութիւնների հետ
պիտի պատերազմէին:

Մնում է մեզ միայն ինչի վրայ երեխաների և ձե-
ռագործական ուսումնարանները (Kleinkinder-und
Arbeits Schulen): Առաջինները մանաւանդ այն մեծ

երեւոյթը՝ Վերմանիա և Իտալիա միապետու-
թիւններ են,— բայց պատերազմում են հա-
զարեան, միջնադարեան գաղափարների դէմ.
Իսկ Ֆրանսիան որ հանրապետութիւն է, պաշա-
պանում է նոր հնացած գաղափարը...

Բայց թող ներուի մեզ յուսալ որ այդ դը-
րութիւնը Ֆրանսիայում ժամանակաւոր է, և
յուսանք որ 1789 թ.ի ազատամիտ, մար-
դասէր գաղափարները ժամանակաւորապէս կա-
րող են մթնանալ, բայց երբեք հանգչիլ չեն
կարող, արմատացած լինելով Ֆրանսիացու
բարբ ու վարքերի, նրա հիմնարկութիւնների
մէջ... յուսանք որ այդ լուսաւոր գաղափար-
ները երբեք չեն թոյլ տայ յաղթել իրանց ան-
ցեալի մտքերով:

ՆԱՄԱԿ ԺԵՆԵՎԻՑ

Ես գրել էի «Մշակիդ», թէ Երուսաղեմի վանքը
մտադիր է մի քանի հայկազն պատանիք առաքել
Զուլեյքիկում մանկավարժութիւն սովորել տալու
համար, որպէս զի սեռաւ ուսման ընթացքն սուր-
տեւոյց յետոյ, կրթութեան առողջ գաղափարներ
տարածեն փոքր Ասիոյ մէջ և օգնեն բարեկարգել
էի որ աղջակներ հայրենի ևս նոյն իսկ ազնիւ ցան-
կութիւնն ունի, զոր նա մինչև այժմ անշուշտ
ի գլուխ հանած կլինէր, եթէ նիւթական հնար
գտնէր:

Զգրեւում, թէ արդեօք կովկասի հայերն ևս այն-
պիսի դիտաւորութիւնը ունեն, թէ ոչ, ինձ միայն
քաջ լայտնի է լրագիրներից և մասնաւոր նամակ-
ներից, որ արդիս բոլոր կովկասի հայերի մէջ յի-
րան եղող կրթութեան ջերմ փափագը յաղեցնե-
լու ձեռնառա դաստիարակներ չկան մեզանում:
Ժողովուրդն ամեն տեղ կրթութեան քաղցր ար-
դիւնքների յուսով վարժարաններ հիմնելու և սոցա
համար մեծագին գումարներ զոհելու վրայ է. սա-
համար զոհողները կորչում են, յոյսերը չբանտում և
այս նորաչէն հաստատութիւններ լոյս տեսնելու
օրից սկսեալ ուրախութեան փոխարէն դարձ ու-
բաւահի առիթ են տալիս ազգին, զի աստ վար-
ժարան կայ, բայց վարժապետ չկայ, անդ վարժա-
պետ կայ, բայց անպատշէ է. մի տեղ վարժապետ
անգոհ է ժողովրդից, միւս տեղ ժողովուրդը վար-
ժապետից, ուրեք երկուքն էլ իրարուց և ամենայն
տեղ բարիքներն խառնալով, ևս, ուր ամենից
շատ դժուար հարկաւ մեր թշուառ մանկտին է:

Ազգային կրթութեան օգտի և անհրաժեշտ կա-
րեւորութեան վրա երկբայող անձինք, կարծեմ, էլ
չկան մեր մէջ և եթէ լինին՝ այսպիսի մարդ չեն,
այլ իրարուր տարիներեց միացեալ անկենդան
մասնակիցներ, որք այլ ևս բան չունին այս աշ-
խարհում: Ամենքս էլ գիտեմք ուրեմն թէ մեզ
կրթութիւն հարկաւոր է, թէ առանց կրթութեան
այս դարումն անարել անհնարին է, հաւաստի լի-
նելով որ եթէ մեր բանն այսպէս շարունակուի
իսպառ պիտի նուաստանաք, կորչենք և մեր ազգի

անունն անգամ քաղի տանք: Մակայն գիտնալն
ու հաւատալը զեռ քիչ է— հաւատը մեռեալ են

առանց գործոց, պէտք է նաեւ գործ տեսնել:
Միթէ գործ չկեք տեսնում, կարող են ասել
ուսանք, մեր նորաչէն վարժարաններ վրա մատ-
նացոյց լինելով: Արդարեւ այս վարժարանների թիւն
ազգի թիւն և նիւթական վիճակի հետ համեմատե-
լով բաւականին մեծ է. բայց նոքա ամուր հիման
վրա յիշուած, բարեկարգ, տեսական և արդիւնա-
ւէտ կենդանութեան երաշխիք տուող հաստատու-
թիւնը չեն: Ուսումնարանի չէնքեր հիմնելը դժուար
բան չէ. այսպիսի չէնքեր կայն (ևս է արդեօք
Խալիպեան պարոց) և կլինեն և ազգի լուսաւորու-
թիւնը դարձեալ մազի չափ չի շահուիլ նոցանից:
Լաւ էր որ մեր արդի լուսաւորչները հոյակապ
պաշտներ չենելու տեղ՝ նախ վարժապետներ
պատրաստելու փոյթ տանէին, որք ընդունակ լի-
նէին ինանք և հոգի ջնորհելու այս աներին: Փա-
ռաստնչ մարդիկ որոնք կամեում են որ ի ձայն
փողոյ, սրնգի, տաղի և նուագարանաց ամեն ու-
րեք հռչակուի, թէ աւասիկ նոքա հիմնեցին այս
ինչ վարժարանը, և չեն ուղում ըմբռնել, որ վար-
ժարանը լոկ պատերով վարժարան չէ լինում,
այլ գիտնական ու հմուտ վարժապետներով, լու-
սաւորեալ և աղջակներ տեսնելով: Պաշտներ
հիմնող Մարկոսներ ու Թորոսներ բաւականին տե-
սանք, այլ օգուտ դու չի պիտի տեսնենք և այս
նոր պաշտաների վրա գործարկեալ դուստրները
նոյնպէս ապարդիւն պիտի կորչեն, ինչպէս որ ար-
դէն շատ անգամ կորած են Մարկոսների անյա-
տակ փորում խեղճ հայերի արեւմտ քրտնքով
ձեռք բերուած անթիւ հաղարները:

Որպէս այս փառապանչ անհատները նման ժո-
ղովուրդն էլ երբեմն սիրում է երեսպակցել, որ
վարժարանի նիւթական որոմը չինելով, արդէն
կհամար իւր տեսնալի նոյառակին և իսկոյն վարժ-
ու կլինի որդիք կուսնանայ, միայն ափսոս որ այս
երեսպակցութիւնը խաբարել է... Կրթութեան
գործը շատ դժուար բան է. մեր դարում և գալ-
թաժամանակիս թիւրաւոր պիտոյքների համեմատ յա-
ռաջ տանելու համար յատկապէս սաւ այս պատ-
րաստեալ մարդիկ հարկաւոր են: Մենք միշտ
պատրաստ ենք որդիական շնորհակալութեամբ յի-
շելու մեր հին վարժապետների, սիրաւորների և ժամ-
կոյների բարի ջանքը, նոքա արին ինչ որ կա-
րող էին անել մեր ազգի թշուառութեան խա-
ւարչութիւն օրեւում և թիւրս լաւ էին մեր լուսա-
հոգի պապերի ժամանակ, երբ ոչ էլ երթբերական
գծեր կային և ոչ երկաթուղիներ, բայց այժմուս
չէ չեն պիտանի: Հայերի թող բնաւ չկարծեն, որ
ազգային գաղափարներ համար այս հին կարգի վար-
ժապետներն էլ բաւական են մեզ: Եթէ մեր ազգը
գէթ մի անգամ տեսնէր, թէ ինչ մեծ կարեւորու-
թիւն են տալիս, օրինակի համար, Վերմանացիք
ու Զուլեյքիցիք վերջիկ մասնկաւոյ դաստիարա-
կութեանը և թէ ինչ կերպիւ է հաղորդվում կըը-
թութիւնը այս փոքրիկներին՝ այնուհետեւ վերա-
հառու կլինէին, որ յատկապէս սկզբնական վար-
ժարանների համար առաւել մեծ աշխատութիւն
տոկոսութիւն, ջանք, փոյթ և առաւել բազմա-
գիւրի հմտութիւն և փորձ է պահանջվում վար-

արժանաւորութիւն ունեն, որ փոքր երեխաները
մի օրինաւոր վերատեսչութեան տակ են լինում
մինչև որ նրանց ծնողները դաշտումը աշխատում
են: Մի գիւղացի վարժուհի նրանց հետ պարա-
պում է, առանցիկ է պատմում, երգեր և թւեր է
սովորցնում, նրանց հետ երգում է, խաղում է, մի
խօսքով ամեն միջոցներով նոցա պարապեցնում է:
Լաւ եղանակին վարժուհին տանում է իր սանե-
րին այդի կամ մարդի վերա: Միեւրի է այսպիսի մի
զբաղման տեսնելու: Շատ անգամ մի չունեն, օրին
ամենքս էլ բռնում են, նրանք ամենից կապող
կապը,— առաջին տղաները քաղում են չուանը, նը-
րանց ետևից գնում են աղջկաները և որովհետեւ
այս փոքր տիկնոջները արդէն բաւական յարմա-
րութիւն տիրող են, փոքր կալվալները ստիպ-
ված են նոցա քաշել: Ամենից վերջը հետեւում է
վարժուհին, մի հաւի նման, իր փոքր երգերը
պաշտպանելով: Գիւղացիները այս փոքր երեխա-
ների ուսումնարանները ամեն տեղ մեծ համա-
կրութեամբ ընդունեցին և ուր որ գիւղի մէջ կայ
մի յարմար կլին, կարգվում է և այս բարեբար հիմ-
նարկութիւնը:

Գոցանից պակաս չեն իրանց բարեբար ազգի-
ցութեամբ ձեռագործական ուսումնարանները:
Շաբաթը երկու անգամ ժողովվում են այնտեղ 9
տարեկան հասակից սկսած աղջկաներ և ձրիա-
բար սովորում են գործել, կարել և ուրիշ ամենա-
հետ կանանց ձեռագործութիւնները: Այդ միջո-
ցին մի գիւղ են կարողում, երգում են կամ խօ-
սում: Թէ և այս ուսումնարանի վերաբերութեամբ
ստիպողական միջոցներ չկան, որովհետեւ շատ ան-

գամ աղջկաները ստիպված են տանը մնալ իրանց
մայրերին օգնելու համար, բայց այնու ամենայնիւ
ուսումնարանի մէջ տիրող զուարթ ուղղութիւնը,
ձգում է աղջկաներին այնտեղ և կարելի չէ գա-
զատիլ որ երթեկները փոքր լինեն:

Բայց մէկը կը հարցնի՝ ինչ պէտք է վարի ըն-
տանիքի հայրը այս բոլոր բարեբարութիւնները
համար: Հազիւ աւելի քան տարեկան 1/2 բոլոր
ամեն երեխայի համար: Համայնքները մեծ մա-
սով իրանց ուսումնարանները իրանց սեփական
միջոցներով են պահպանում, պետութիւնից օժան-
դակութիւն ստանալով, կամ եթէ մի համայնք
բոլորովին աղքատացաւ, պետութիւնը իր սեփա-
կան գանձարանից պահպանում բոլոր գիւղական
ուսումնարանները:— Հասկանալի է որ քաղաք-
ների մէջ ժողովրդական ուսումնարանները շատ
աւելի մեծ միջոցներ ունեն: Այնտեղ դաստիարա-
նների բաժանելով սեռերը և հասակները կարելի է
շատ աւելի հարուստ հետեանքների հասնել: Ու-
սումնարան գնալը այնտեղ էլ աւելի երկար չէ
շարունակվում քան թէ մինչև 14 տարեկան հա-
սակը, բայց ուսումը շարունակելու համար այնտեղ
էլ ինչպէս գիւղերում միջոց կայ:

Աւելորդ է ինչի այն մեծ գերազանցութիւն-
ները որ ունի մեր ուսումնարաններով հարուստ
երկիրը ուրիշ քաղաքակրթված երկրների հետ
համեմատելով. բաւական է այստեղ նկատել միայն
այն, որ Վերմանիայում հազիւ թէ 1000 մարդ-
կերանց վերա գտնվի մէկը որ չը գիտենար կար-
դալ և գրել:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԴՐ ԱՐԾՐՈՒՆԻ